գիւտ թուրքը Հաջի Զէյնալ Արզին Թաղիեվ անունով մի անգրագէտ գեղացի էր: Սա նախ ընկերացաւ մի հայի, Պօղոս Սարգիսեանի[3] հետ եւ նաւթային գործի ձեռնարկեց շատ վաղ· ապա երբ իր առուտուրը մեծապէս յառաջացաւ, ինքը լիառատ կերպով վարձատրելով Սարգիսեանին, նրանից բաժանուեց եւ մինակ շարունակեց իր նաւթային արդիւնաբերութիւնը եւ դարձաւ Բաքուի ամենայայտնի դէմքերից մէկն, եւ շատ մեծ հեղինակութիւն էր վայելում ոչ միայն թուրքերի այլ եւ հայոց մէջ: Սա էր, որ Բաքու առաջին թատրոնը շինեց, եւ հայ թատերախումբին տուեց հայկական ներկայացումների համար[4]:

Թաղիեվից օրինակ առնելով մի քանի ուրիշ ընիկ թուրքեր եւս նաւթային ձեռնարկութիւնների մէջ մտան եւ նոյնպէս մեծ յաջողութիւն ունեցան: Բայց հայերի ազդեցութիւնը թուրքերի վրայ երեւաց մանաւանդ կրթական, մշակոյթային ասպարէզում: Նրանք սկսան իրենց որդիներին մեծ թուով ռուսական ուսումնարանները տալ եւ ապա նաեւ բարձրագոյն դպրոցներն ուղարկել: Թաղիեվ շատ չքաւոր թուրք ուսանողների ուսման ծախքերն է հոգացել: Համալսարաններում եւ այլ դպրոցներում միասին ուսում առնող Բաքուցի հայերն եւ թուրքերն, երբ դարձան, լաւ ընկերներ եղան: Թուրքերը դերակշռող դեր էին կատարում գլխաւորապէս քաղաքային վարչութեան գործերում, որովհետեւ իրենք քաղաքի կալուածների մեծ մասի տէրերն էին, որով եւ քաղաքային ընտրութիւնների ժամանակ՝ ընտրեալների մեծամասնութիւնն էին կազմում: Մի ուրիշ հարուստ թուրք՝ Հայոց Մարդասիրական Ընկերութիւնից օրինակ առնելով մի չքեղ դպրոցական շէնք շինեց: Ամէնից աւելի յաջողութիւն ունեցաւ թուրքերի մէջ թատրոնական գործը: Թուրք նորաւարտ մտաւորականները հայերի օրինակից դրդուած իրենց «Կուլտուրական Միութիւնն» ստեղծեցին, որի գլխաւոր գործունէութիւնը՝ թատրոնն եղաւ: Նրանք սկսան ռուսերէն կատակերգութիւնները թրքերէնի վերածելով Թաղիեվի թատրոնում ներկայացնել: Այս ներկայացումներին մեծ բազմութեամբ յաճախում էին նաեւ հայերն, որոնց համար թրքերէնը մեծապէս մատչելի լեզու էր: Պէտք է այս էլ աւելացնեմ, որ երբ հայերը բացի Բաքուից ուրիշ մտաւորական կենդրոններ ունէին ինչպէս Թիֆլիսը, Երեւանը, Ալեքսանդրոպոլն եւայլն, թուրքերի ամբողջ այդ ոյժը կենդրոնացած էր Բաքուի մէջ: Թրքական ներկայացումների ժամանակ դերասանուհիների դերը հայուհիներն էին կատարում, ինչպէս էր Կ. Պոլսում եւս, մինչեւ վերջին Յեղափոխութեան տարիներն:

Ուշադրութեան արժանի երեւոյթ էր նաեւ հետեւեալը:

Զուխաճեանի «Լէրլէրիջի Հօրհօր Աղա» օպերէտի դուռ մեծ ընդունելութիւնը տուին մի թուրք երգահանի, Հաջիբէգով անունով, որ ինքն էլ այդպիսի մի երաժշտական կատակերգութիւն հեղինակէ, որ շատ աւելի մեծ յաջողութիւն գտաւ հայոց մէջ քան թուրքերի: Այս թրքական օպերէտը՝ հանրածանօթ «Արշին մալ ալա՞ն»ն (= Ո՞վ է կանգունով ապրանք ուզում) է, որի բնագիրը հայերէնի թարգմանուեց խոկոն եւ այնուհետեւ հայկական բեմի մշտական զարդն է դարձած: Այս կատակերգութեան՝ հայոց մէջ տարածման պատճառն այն է, որ նրա բոլոր եղանակներն այնչափ ծանօթ են եւ ժողովրդական հայոց մէջ որչափ թրքաց: Արդէն կովկասեան ժողովրդական երգերին ծանօթ հայ երաժիշտներ աշխատակցած եւ օգնած են այս խնդրում Հաջիբէգովին: Ամբողջ Անդրկովկաս երգում է այդ եղանակներն, որոնք, մեծ հմտութեամբ եւ ճաշակով ժողովել եւ կանոնաւորել էր Թուրք երաժշտագէտը: — Այս մեծ յաջողութիւնից խրախուսուած՝ Հաջիբէգով մի երկրորդ օպերէտ եւս հեղինակեց — «Օ օլմասըն բու օլսուն» — նա (աղջիկը) թող չլինի, սա լինի· բայց առաջինի հրապոյրը չունէր:

Շատ ափսոս, որ այս հայ-թրքական մտերմական յարաբերութիւնները, Բաքուի մէջ պիտի նսեմանային այն մեղապարտ դիպուածների հետեւանքով, որոնք ծանօթ են «հայ-թրքական ընդհարումներ» անուամբ եւ որոնց վրայ խօսելու տեղը չէ այստեղ:

(Շարունակելի:) ՍԱՐՈԽԱՆ

[3] Այս Սարգիսեանի պրին, տիկին Եղիսաբէթ Սարգիսեան, Բաքուի հայ տիկինների մէջ, որոնք ազգային մեծ գործունէութիւն են ունեցած, առաջնակարգ տեղ էր գրաւում: Ի մէջ այլոց նա այնպէս ջերմ «մշակական» էր, որ «Մշակի» հիմնադրի հանդէպ էր յարգանքն ու համակրանքը ցոյց տալու համար, կասպից ծովի վրայ բանող իր սեպհական շոգենաւը «Գրիգոր Արծրունի» անունով էր մկրտել:

[4] Ես Բաքու էի, երբ առաջին հայերէն ներկայացումը տրուեց նրա նորաշէն թատրոնում: Թաղիեվ անձամբ եկել էր ներկայացման: Միջնաբերի ժամանակ մի քանի հայերի հետ միասին գնացինք Թաղիեվի օթեակը շնորհակալութիւն յայտնելու նրան: Թաղիեվ շատ ուրախ էր, որ նրա յառաջիմական ձգտումը գնահատուած էր: Նա ի մէջ այլոց ասաց մեզ. «Թուրքերը ինձ մեղադրում են թէ ինչո՞ւ ես մզկիթ չեմ շինել այլ թատրոն: Ես պատասխանեցի այդպիսի անեղի հարց առաջարկողներին թէ թուրքերն այնչափ շատ մզկիթ ունին, որ եթէ ինձանից կախուած լինէր, ես այդ մզկիթների մի մասը թատրոնի, դպրոցի, ակումբի եւ այլ այդպիսի կրթական հաստատութիւնների կը վերածէի մեր ազգ ժողովրդի զարգացման նպատակով համար»: Ես լաւ ծանօթ էի նրա հետ. նա մի քանի անգամ հրաւիրած է ինձ իր փառաւոր տունն եւ ներկայացրած իր երիտասարդ կնոջ, որ ռուսական միջնակարգ դպրոցում աւարտած ուսեալ թրքուհի էր: Նրա մեծ եւ չքեղ դահլիճի ամենամեծ զարդը հոչակաւոր հայ նկարիչ Այվազովսկու Բոսֆորի լայնածաւալ նկարն էր:

Թաղիեվից յետոյ մի հարուստ հայ (Մայլեան), աւելի նորաձեւ եւ աւելի մեծ յարմարութիւններով նոր թատրոն շինեց, ուր թէ տեղական հայ եւ թէ եկուոր ռուս խումբերը ներկայացումներ էին տալիս:

ԵՐՈՒԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆ

ՀԱՅ ՄԵԾ ԱԶԳԱԳԻՐԸ

Փետրուար 28ին վախճանեցաւ Երեւանի մէջ հայ մեծ ազգագիրն՝ Երուանդ Լալայեան:

Անիկա այն հազուագիւտ Հայերէն էր, որոնք կը ծնանին գաղափարականի համար, կ'ապրին գաղափարականով եւ կը վախճանին նոյն գաղափարականին անձնազոհ: Կռիւ, յամառութիւն եւ յարատեւութիւն անբաժին ընկերներն են անոնց:

Միանգամ՝ իջած կռուի ասպարէզ, յարատեւեց անիկա հոն յամառօրէն մինչեւ մայրամուտը իր արեւին: Դժուարութիւնները չընկճեցին իր կորովը. բայց ինքը զգետնեց դեւը. ու ելաւ յաղթական ըմբշամարտ կռուէն: Թողնելով հարուստ աւարն, ընդարձակ նուաճումները ժառանգութիւն իւր Տոհմին, տուաւ հրաժեշտ ասպարէզին, երթալու հանգչելու անուշակ յաւիտենականութեան մէջ դափնեպսակ:

Երբ հրապարակ ելաւ Լալայեան, սաղմնային վիճակի մէջ էր հայ Ազգագրութիւնը, ազգագրական անգիր նիւթերը դեռ նոր էին սկսած շարժել հետաքրքրութիւն (Սրուանձտեանց), իբրեւ գիտութիւն չէին առնուած անոնք նկատի: Եւ երբ յօրինուածական աշխատանք առաջարկուեցաւ (Թալաթեանց), չեղան գործին փարողներ: Ժամանակը կը սահէր սակայն. Կրոնոս կը գործէր աւերներ իւր ճանապարհին վրայ. եկամուտ ազդեցութիւններ կը յեղափոխէին ժողովրդական ըմբռնումները. հին սովորութիւնները, անգիր գրականութիւնը կը մատնուէին մոռացութեան. ենթարկուած էր վթարի հայ ազգագրութեան ակնադրիւրը:

Երուանդ Լալայեան տակաւին երիտասարդական կորովի մէջ, հրահանգուած մասնագիտութեամբ եւրոպական կենդրոններու մէջ, երեւցաւ հրապարակի վրայ իբրեւ ազգագիր՝ հրաւիրելու ուշադրութիւն դէպի հայ ժողովրդական կենցաղ, արծարծելու յարգանք հանդէպ հայ մնոտիապաշտ հաւատքին, անգիր բանահիւսութեան, կազմակերպելու ոյժեր գրի առնելու հնաւանդ հաւատալիքներ, սովորութիւններ, բանահիւսութիւններ, որոնց վրայ նախապատմական եւ պատմական հայուն ոգին էր թառած:

Սակաւներու ականջին մէջ միայն ղօղանջեց քարոզչին ձայնը: Անիկա, որ կոչուած էր ուսումնասիրել տոհմային հին քարքերու մնացորդները, ստիպուած զգաց նուիրել ինքզինքը հում նիւթեր հաւաքելու: Արագ արագ ընթացաւ հայա-

© National Library of Armenia

ընակ գաւառները, թափանցեց ընտանեկան յարկերու խորքը, պեղեց, հետազօտեց, հարցաքննեց խօսուն եւ անխօսուն խորշերն հայ աշխարհին: Եւ ըերաւ երեւան անթիւ անհամար նիւթեր, տեղագրական, հնախօսական, պատմական, գեղարուեստական եւ ազգագրական[1], լուսանկարներով եւ արտագրութեամբ գրի առնելով: Ցայտնագործուեցան անլոյս աշխարհներ:

Հայ Ազգագրութեան հիմը դրուած էր արդէն: Ազգագրական այս նիւթերը ուսումնասիրելու, շտեմարանելու եւ նոյն մարզին վրայ աշխատակիցներ համախմբելու համար, հիմնեց Լալայեան "Ազգագրական Հանդէս"ը, քիչ յետոյ նաեւ "Ազգագրական Ընկերութիւնը" եւ "Ազգագրական Թանգարանը": Ինչ որ զարգացած ազգերու մէջ հաւաքական ոյժը կը ստեղծագործէր, ի գլուխ հանեց Լալայեան անհատական ուժով: Ինքն էր Հանդէսին ալ, Ընկերութեան ալ, Թանգարանին ալ շունչն ու հոգին:

Ե. Լալայեան

Երկար տարիներու աշխատանք պահանջեցին անոնք. շատ ծայն հարկ եղաւ սպառել, կորով վատնել. բայց տեսաւ ի վերջոյ Վաստակաւորը, թէ մնավաստակ չելան իր ջանքերը: Հայ Ազգագրութիւնը առած էր կերպարանք. Թանգարանը գտած էր տեղ հայրենի հողին վրայ, հայ կառավարութեան հովանւոյն տակ:

Համաշխարհական պատերազմին ստեղծած տնտեսական տագնապը, Կովկասեան հրապարակին կրած յեղափոխ շրջանները վերջ էին տուած Հայ ազգագրական Ընկերութեան, անոր հետ նաեւ Ազգագրական Հանդէսին: Բայց մեծ Ազգագրին միշտ խանդավառ սրտին մէջ չէին մարած յոյսերը միւսանգամ կեանք շնորհելու ինչպէս Ընկերութեան, նոյնպէս Հանդէսին: Այս յոյսերով որորուն շիջաւ իր կեանքի կրակը:

Քանի կար ջերմութիւն իր կրակներուն մէջ, կ'ապրէր հաստատակամ իր կոչման: Հակառակ յառաջացած տարիքին, կը շարունակէր անիկա իւր ճանապարհը առանց դուլ եւ դադար տալու իր անձին: Հեգնելով ամէն անհաթութիւն, կը տանէր յառաջ իր գիտական արշաւանքները դէպի սար ու ձոր, ուր կ'ապրէր հայ ժողովուրդը: Կը հաւաքէր հում նիւթեր, հէքեաթներ, զրոյցներ, առածներ. կը դասաւորէր, կ'ուսումնասիրէր, միշտ թարմութեամբ, աշխոյժով:

Քառասուն եւ վեց տարի գործեց Լալայեան հայ ազգագրական մարզին մէջ: Լոյս տեսան իր գրչէն մեծաթիւ հատորներ: Բայց աւելի մեծաքանակ է թիւը այն հատորներու, որոնք մնացին անտիպ իր գզրոցին մէջ: Կը յիշեմ տակաւին, որքան անձկով եւ խանդավառութեամբ կը ճառէր անոնց մասին. որքան կ'ողբար աննպաստ ժամանակը, որ կը կաշկանդէր իր ձեռքերը, մամուլի յանձնելու զանոնք: Անոնց թուին մէջ էին հայ Ցնայնագործական արուեստի, Հարսանեաց, Թուղարկաւորութեան վրայ գրած ուսումնասիրութիւնները. Ուտեցիներու ազգագրութիւնը, հարուստ հաւաքածոյը հայկական Զարդաքանդակներու. Եկարագրութիւնը Վասպուրականի Վանքերու, Ջեռագիրներու, Ծոխ հաւաքածոյները հայկական Հէքեաթներու, Առածներու եւն եւն:

Արագ էր Լալայեան իւր պրպտումներուն մէջ. ընդարձակածաւալ էր իւր ծրագիրը, ընդգրկող Ազգ, Աշխարհ եւ Քաղաքակրթութիւն. այս պատճառաւ ալ կը ձգտէր յանհնարինս, եւ արտադրութիւնները կը կրեն անհաւասարութեան նկարագիր: Արագ ընթանալով, անտեսած է շատ բան. ճշդութեան չէ եղած ուշադիր, որ անհրաժեշտ էր մանաւանդ հում նիւթերու հաւաքման ժամանակ: Իր արտադրութիւններն արձանագրութիւններու, ձեռագրական յիշատակարաններու եւն կը կարօտին վերստուգութեան:

Բայց եւ այնպէս ինչ որ համբարեց Լալայեան, հաւաքեց ժամանակին. անոնք փրկուած են կորուստէն եւ պիտի մնան ստացուածք գիտութեան: Եկող սերունդները պարտաւոր են երախտագիտութեան. պիտի օրհնեն յիշատակը մեծ Վաստակաւորին:

Ու կը հարցնեմ ես ինձ ի տես անոր շտեմարանած հունձքին. Պիտի ունենայ Ազգը իւր որդիներու թուին մէջ երկրորդ մը, որ հաւասարի արդիւնքով Լալայեանի, շարունակէ նոյն խանդով այն գործը, որուն ծնունդ տուաւ Լալայեան:

Պակասը զգալի կ'ընէ առ այժմ կորուստին մեծութիւնը:

Հ. Ն. Ակոնեան

ԵՐՈՒԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆ

Նոր վշտով կարդացինք մեծ Ազգագրին մահուան լուրը († Փետր. 28):

Ահա խուզարկու մը, որ աշխատելու եռանդով տոգորուած, եւ գործելու տոկունութեամբ աննկուն կը փակէ աչքերն առ յաւէտ:

Այս մեծ հայուն ծննդավայրը Լենինականն (Աղեքսանդրապոլ) եղաւ, ուր Լալայեան 1864ին աշխարհին լոյսը տեսաւ: Մանկութեան եւ պատանեկութեան ուսումները կը բաշխէ իրեն Ներսէսեան Վարժարանը (Թիֆլիս):

Սրուանձտեանցի ազգագրական նիւթերը դեռ նոր սկսած էին հրատարակուիլ, Գր. Խալաթեանցի «Մրագիր հայ ազգագրութեան» (1887) հաղիւ հրապարակ ելած էր, երբ Ե. Լալայեան կը մտնէր իր երիտասարդական հասակը, հրաժեշտ կու տար դպրոցական ընթացքին: Մասնաւորապէս ազդուած Խալաթեանցի ծրագրէն, կ'որոշէ Լալայեան նուիրել ինք զինքը Հայ Ազգագրութեան[1]: Հասնելու համար այս նպատակին՝ կ'անցնի Եւրոպա, եւ Ժընէվի Համալսարանին մէջ կը յաճախէ հասարակական գիտութիւններուն: Աւարտելով ուսման ընթացքը կը մնայ ժամանակ մը նոյն քաղաքը ուսումնասիրութիւններու անձնատուր, նաեւ ուսուցչական ասպարէզի վրայ պարապած:

1894ին կ'այցելէ Լալայեան Վիեննա, ուր կիսամեայ ժամանակ մը Մխիթարեան Մատենադարանին մէջ խորամուխ կ'ըլլայ մատենագրական հետազօտութիւններու մէջ: Այս տեղ իր ձգտումները գնահատող եւ քաջալերող միջավայր մը կը գտնէ: Համբարած առատ պաշար՝ կը փոխադրուի Լալայեան Պարիս, յաճախելու Մարդաբանական Դպրոցին (École d'Anthropologie) դասախօսութիւններուն: Մարդաբանական Ընկերութիւնը կը գնահատէ Լալայեանի կարողութիւնը եւ զայն թղթակից անդամ կ'ընտրէ. իսկ ժողովրդական աւանդութիւններու Ընկերութիւնը (Société des traditions populaires) զայն իր գործոն անդամներէն մին կ'ընէ: 1895, Մայիս 18ին Լալայեան Մարդաբանական Ընկերութեան առջեւ իր մէկ ուսումնասիրութիւնը կը կարդայ, որ է. «Les

[1] Հանդէս Ամսօրեայ 1895, էջ 219: — Ազգագրական Հանդէս, Ա, էջ 5:

© National Library of Armenia